ՄԵՐԻ ՆԱՋԱՐՅԱՆ
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 94 (479.25)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Հայոց ցեղասպանություն, Խորհրդային Հայաստան, Սփյուռք, Հայոց ցեղասպանության հիշատակ, 50-ամյակ, Հակոբ Զարոբյան, ԽՄԿԿ Կենտկոմ, ՀԿԿ Կենտկոմ, հանրահավաք, ցույցեր, երթեր:

Ключевые слова и выражения: Геноцид армян, Советская Армения, Диаспора, память Геноцида армян, 50-лет, Акоб Зарубян, Центральный комитет коммунистической партии Советского Союза, Центральный комитет коммунистической партии Армении, митинг, демонстрации, марши.

Key words and expressions: Armenian Genocide, Soviet Armenia, Diaspora, Armenian Genocide Remembrance, 50 th anniversary, Hakob Zarobyan, Central Committee of the Communist Party of the Soviet Union, Central Commitee of Armenian Communist Party, rally, demonstrations, marches.

Հայ-թուրքական հարաբերությունների ընթացքի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ներկայիս ՀՀ արտաքին քաղաքականության ակունքները ճիշտ և առավել ամբողջական պատկերացնելու համար, նպատակահարմար ենք գտնում նախ անդրադառնալ 1965 թվականի Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված իրադարձություններին ինչպես ՀԽՍՀ-ում, այնպես էլ սփյուռքում:

Եթե Խորհրդային Հայաստանի ղեկավարությունն ընդհուպ մինչև 1965 թվականը, համարձակություն չէր դրսևորում Հայոց ցեղասպանության փաստն անգամ սեփական երկրում բարձրաձայնելու, ապա սփյուռքահայության համար այս հարցը դառնում էր լուրջ հրամայական:

Նշենք նաև, որ ընդհուպ մինչև 1965 թվականը Հայոց ցեղասպանության թեման արգելված էր ոչ միայն ՀԽՍՀ-ում, այլև Թուրքիայում: Ուստի ամենևին էլ պատահական չէր, որ նշված թեմայով առաջին հոդվածները թուրքական մամուլում լույս են տեսնում հենց 1965 թվականին և առնչվում են ինչպես ՀԽՍՀ-ում, այնպես էլ սփյուռքում ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների հետ: Դրա հետ միասին ուզում ենք ընդգծել նաև այն հանգամանքը, որ հենց այս ժամանակաշրջանից սկսած թուրքերը հենվելով պաշտոնական ստի և կեղծիքի վրա խեղաթյուրելով պատմական փաստերն ու

իրադարձությունները գրավել էին ընդգծված ժխտողական դիրք: Ընդ որում թուրքական իշխանությունները հաջորդում էին միմյանց, սակայն անփոփոխ էր մնում վերջիններիս վերաբերմունքը Հայոց ցեղասպանության վերաբերյալ[1]:

Մեր տրամադրության տակ եղած փաստերը վկայում են, որ Խորհրդային Հայաստանի առանձին կուսակցական ղեկավարներ և, մասնավորապես, Յակով (Հակոբ) Զարոբյանը զգալի դերակատարություն են ունեցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 50-ամյակը պետական մակարդակով նշելու հարցում[2]:

Այսպես, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանը ՀԿԿ կենտկոմի անունից դիմում է Մոսկվա՝ Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցը նշելու թույլտվություն ստանալու համար: ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոն հարցը քննարկելու համար ստեղծում է հատուկ հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Մ. Սուսլովը, Ն. Պոդգորնին, Ա. Գրոմիկոն[3]:

Պետք է ընդգծել, որ Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշումը կապված էր երկրում տիրող վարչահրամայական համակարգի հետևանքով ստեղծված զգալի խոչընդոտների հաղթահարման հետ: Ուստի միանգամայն իրավացի էր հայտնի արձակագիր Վարդգես Պետրոսյանը, ով անդրադառնալով ստեղծված իրավիճակին բավականին դիպուկ կերպով նշում էր «…1920-ից մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք տխրելու իրավունքից: Այդ ամենը, հասկանալի է վիրավորում էր մեր ազգային ինքնասիրությունը, … գերլարման հասցնելով մեր ազգային համբերության և արժանապատվության պրկված զսպանակը: …1965 թվականին, Մեծ Ցեղասպանության 50-ամյա տարելիցի օրը այդ զսպանակը պայթեց»[4]:

---

[1] Տե՛ս Միրզոյան Է., Հայոց ցեղասպանության թեմայի զարգացման միտումները «Ակօս» շաբաթաթերթի էջերում Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007),- http://allturkey.am/13781/agos-armenian-genocide/#sthash.wzqqG8qb.hFbNjMqO.dpbs

[2] Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմ. և խմբ. Ա. Հարությունյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 8:

[3] Հովհաննիսյան Ն., Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, էջ 12-13:

[4] Պետրոսյան Վ., Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես… իմ վիշտը, Երևան, 2003, էջ 133:

Ասվածից դժվար չէ կռահել, որ ժամանակի ՀԽՍՀ պետական-կուսակցական ղեկավարությունից վիթխարի ջաքեր էին պահանջվելու Մոսկվայից համապատասխան թույլտվություն ստանալու համար: Անդրադառնալով դրան Յա. Զարոբյանը գրում էր հետևյալը. «Կենտկոմի Նախագահությանը պետք էր կամքի մեծ ուժ ունենալ, որպեսզի բարձրացներ այդ հարցը: Մենք մեր կուսակցական պարտքը համարեցինք նշել այդ տարեթիվը, որպեսզի Կենտկոմի շուրջ համախմբենք մեր ժողովրդին»[5]:

Դեռևս 1964 թվականի հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ. Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Ինճիկյանը և ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջ. Կիրակոսյանը նամակ են հղում ՀԿԿ կենտկոմին՝ ներկայացնելով «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» 11 կետերից բաղկացած գիտաքարոզչական, մշակութային-զանգվածային միջոցառումների կազմակերպման, այդ թվում «բնակչության միջոցների հաշվին» հուշարձանի կառուցման առաջարկություններ[6]: Մի փոքր առաջ անցնելով նշենք, որ հենց այս նամակի բովանդակությունն էլ ընկած էր Յա. Զարոբյանի վերը նշված դիմումի հիմքում[7]:

Ի վերջո երկարատև քննարկումներից հետո ԽՄԿԿ Կենտկոմը թույլատրում է նշել Հայոց ցեղասպանության 50 ամյակը[8], մի բան, որը, մեր կարծիքով, զգալի ձեռքբերում պետք է համարել:

1965 թվականի մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի Նախագահությունը հաստատում է «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» 15 կետից բաղկացած գործնական կոնկրետ աշխատանքների ծրագիր[9]: Հենց սկզբից նշենք, որ այս ծրագրի կետերի ճնշող մեծամասնությունը կյանքի են կոչվում:

Իսկ ինչ վերաբերում է ցեղասպանության զոհերի հիշատակի կոթողի կառուցմանը, ապա դրա վերաբերյալ ՀԽՍՀ Նախարարների Խորհուրդը 1965 թվականի մարտի 16-ին ընդունում է համապատասխան

[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 1, թերթ 2-4, գ. 2, թերթ 31-63, 71, գ. 4, թերթ 34-49, 61-64:
[6] ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թերթ 66-73:
[7] ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թերթ 170-174:
[8] Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմ. և խմբ. Ա. Հարությունյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 7:
[9] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թերթ 1-2, 4-5, 8-10:

կարգադրություն, որով նախատեսվում էր կոթողի կառուցումը ավարտել 1965 թվականին, սակայն բացումը տեղի է ունենում 1967 թվականի նոյեմբերի 29-ին[10]:

1965 թվականի ապրիլի 20-ին ԵՊՀ մեծ դահլիճում անցկացվում է Հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված ՀԽՍՀ ԳԱ-ի և ԵՊՀ միացյալ գիտական նստաշրջան, որը բացում է ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը: Գիտական նստաշրջանն ուշագրավ էր նրանով, որ զեկուցումների թեմատիկայի ճնշող մեծամասնությունը այս կամ այն կերպ առնչվում էր Հայոց ցեղասպանության հետ[11]:

Այս հանգամանքն, անկասկած, ողջունելի էր, քանզի քննարկվող ժամանակաշրջանում խորհրդային գիտաժողովների պատմության մեջ նման թեմաներով զեկուցումներ, մեղմ ասած, միշտ չէ, որ կարելի էր հանդիպել:

Խորհրդահայ իրականության մեջ Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետական մակարդակով նշվեց 1965 թվականի ապրիլի 24-ին: Այդ օրը Երևանում տեղի են ունենում բազմահազարանոց երթեր և հանրահավաքներ: Ընդ որում, Վ. Ի. Լենինի անունը կրող հրապարակում առավոտյան ժամը 10:00-ին սկսված ցույցի ժամանակ ելույթ են ունենում ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ Ա. Քոչինյանը, ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար Բ. Մուրադյանը, Գրողների միության նախագահ Էդ. Թոփչյանը, Ս. Խանզադյանը: Ցուցարարները ՀԽՍՀ ղեկավարությանը փոխանցեցին ԽՄԿԿ կենտկոմին, ԽՍՀՄ նախարարների խորհրդին և Գերագույն խորհրդի նախագահությանը հասցեագրված նամակ՝ հետևյալ խնդրանքներով ***1.*** Հայկական ԽՍՀ-ին հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը և ԽՍՀՄ տարածքում հայերով բնակեցված պատմականորեն հայկական հողերը, ***2.*** հայրենադարձ հայերին բնակեցնել Նախիջևանում, ***3.*** ազատել յոթ հայրենասերներին, ***4.*** արագացնել արտասահմանից հայերի հայրենադարձությունը[12]:

Նկատենք, որ խորհրդային իրականության պայմաններում նման բովանդակությամբ նամակ-խնդրագրերը բացառիկ երևույթ էին, երևույթ, որը վկայում էր հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության նոր զարթոնքի մասին:

1965 թվականի ապրիլի 24-ին Օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում «1915 թվականի և եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան

---

[10] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 6, թերթ 171, ֆ. 113, ց. 96, գ. 88, թերթ 2:
[11] Սովետական Հայաստան, 1965, 21 ապրիլի:
[12] ՀԱԱ, Ֆ. 170, ց. 1, գ. 165, թերթ 2-10:

քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էին ՀԽՍՀ ղեկավարությունը, Վազգեն Ա կաթողիկոսը: Ժողովը հակիրճ ճառով բացում է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանը, ով, մասնավորապես, ասաց. «Հայ ժողովուրդն այսօր առաջին անգամ արժանավայել նշում է մեծ եղեռնի տարելիցը, նրա բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը: …Դատապարտելով գենոցիդի մարդակեր քաղաքականությունը, մենք դատապարտում ենք ոչ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունն ստեղծողներին և նրա գործադրողներին»[13]:

Բերված փաստերից ամենևին էլ թող չստեղծվի այն տպավորությունը, թե Խորհրդային Հայաստանի կուսակցական ղեկավարությունը տվյալ ժամանակաշրջանում լիովին անցել էր ազգային գաղափարախոսության դիրքերը: Որպես ապացույց, նշենք այն փաստը, որ 1965 թվականի ապրիլի 24-ից ընդամենը 4 օր անց՝ ապրիլի 28-ին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը ընդունում է որոշում «Երևան քաղաքում 1965 թվականի ապրիլի 24-ին տեղի ունեցած, անկարգությունների փաստերի մասին»: Որոշման մեջ, մասնավորապես, հրահանգվում էր «լուրջ բարելավել գաղափարախոսական աշխատանքը, հատուկ ուշադրություն դարձնել ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակությանը, խիստ պատասխանատվության ենթարկել ուսումնական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, պարտավորեցնել ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարներին կատարելու համապատասխան հետևություններ»: Դրա հետ միասին, «հնչեցվեց խորհրդային համակարգին բնորոշ վարչահրամայական քննադատություն»: Այսպես, օրինակ «նշվեց ՀԼԿԵՄ կենտկոմի, Երևանի քաղկոմի և շրջկոմների անբավարար աշխատանքը, ի ցույց դրվեցին ՀԿԿ Երևանի քաղկոմի բյուրոն, ՀԼԿԵՄ կենտկոմի բյուրոն, Հասարակական կարգի պահպանման նախարար Ս. Արզումանյանը»: Ավելին, ՀԿԿ Երևանի քաղկոմին և քաղշրջկոմներին հանձնարարված էր «քննել տեղի ունեցած անկարգությունների փաստերը, քննարկելով ցույցերին մասնակից կոմունիստների անհատական հարցերը՝ նրանց նկատմամբ պատժի խիստ միջոցների կիրառմամբ: Հասարակական կարգի պահպանման նախարարությանը, Դատախազությանը, Պետական անվտանգության կոմիտեին պարտավորեցրին հանգամանալից

[13] Սովետական Հայաստան, 1965, թ. 97, 25 ապրիլի, էջ 2: Նույնը նաև Собрание представителей общественности Еревана.- Газ. «Коммунист», Ереван, 1965, 25 апреля, N 97 (9407)

հետաքննություն անցկացնել, որպեսզի ցույցերի հիմնական սկսողները և մեղավորները պատասխանատվության ենթարկվեն»[14]:

Երևանում ծավալված հիշյալ իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել նաև սփյուռքում լույս տեսնող «Յառաջ» թերթի 1965 թվականի ապրիլի 30-ի համարում «Յիսնամեակը Երևանի մէջ խորագրի» ներքո[15]:

Քննարկվող ժամանակաշրջանում սփյուռքահայությունը ևս ակտիվ պայքար էր ծավալել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ:

Այսպես, 1960-ական թվականներին սփյուռքում շարունակում էր ակտիվ գործունեություն ծավալել դեռևս Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին ձևավորված հայկական պատվիրակությունը: Պատվիրակության նախագահ Հրանտ Սամուելյանը 1965 թվականի ապրիլի 24-ին նամակ-կոչով դիմում է ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին, Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Թուրքիայի նախագահներին, Խորհրդային Միության, Մեծ Բրիտանիայի, Հնդկաստանի, Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի ղեկավար շրջաններին, կոչ անելով, որ վերոհիշյալ երկրների ղեկավարները, այդ թվում և Թուրքիայի նախագահը, Սևրի պայմանագրի հիման վրա ձայն բարձրացնեն, դատապարտեն 1915 թվականին Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդին հասցված անբուժելի վերքերը և «առաջինը քայլերը անեն մեր ժողովրդի օրինական իրավունքները իրենց հայրենական հողի վրա հաստատելու համար»[16]:

Նկատենք, որ նշված կոչում խոսք էր գնում ոչ միայն ցեղասպանության միջազգային ճանաչման, այլև հայ ժողովրդի իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքի վերահաստատման մասին:

Անկասկած, միամտություն կլինի կարծել, թե հիշյալ կոչը կարող էր լուրջ ազդեցություն ունենալ Հայոց ցեղասպանության միջազգային

---

[14] ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թերթ 28-35, գ. 1, թթ. 2-4, գ. 2, թթ. 31-63, 71, գ.4, թթ. 34-49, 61-64: Նույնը նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920-1980, Երևան, 1981, էջ 427:

[15] «ՄԵՐ ՀՈՂԵՐԸ, մեր հողերը, կը բացագանչէ ժողովուրդը»: Յիսնամեակը Երևանի մէջ, Յառաջ, Փարիզ, 1965, թ. 10.296, 30 ապրիլի, էջ 1: Նույնը նաև Ազատ օր, Աթենք, 1965, թ. 6145, 12 մայիսի, էջ 1: Նույնը նաև Արև, Կահիրե, 1965, թ. 14.105, 28 ապրիլի, էջ 1: Նույնը նաև Աշխարհ, Փարիզ, 1965, թ. 242, 8 մայիսի, էջ 1:

[16] Յառաջ, Փարիզ, 1965, թ. 10.294, 28 ապրիլի, էջ 1: Նույնը նաև Ազատ օր, Աթենք, 1965, թ. 6143, 10 մայիսի, էջ 1, թ. 6145, 12 մայիսի, էջ 1: Նույն նաև Ազդակ շաբաթօրյակ, Բեյրութ, 1970, թ. 42, 6 սեպտեմբեր, էջ 667-669:

ճանաչման գործում, սակայն դրա հետ միասին, այս փաստը խոսում է այն մասին, որ հայկական պատվիրակության նախագահը զգալի ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ՝ աշխարհին հասու դարձնելով հայոց մեծ վիշտը:

1965 թվականին Անկարա է այցելում ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ Պոդգոռնին, որն ըստ սփյուռքում լույս տեսնող «Աշխարհ» թերթի հայտարարում է, թե «…Սովետական միութիւնը, ոչ մէկ պահանջք ունի Թուրքիայէն…»: Նույն թերթի կարծիքով այս ժամանակահատվածում նկատվող խորհրդա-թուրքական մերձեցումը շատ ավելի քննադատելի էր, քան Պոդգոռնու հայտարարությունը, քանզի, այդ մերձեցումը պարբերականի կարծիքով «վնասակար էր» «…մեր կենսական շահերուն եւ, ի մասնաւորի, մեր Դատին»[17]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԽՍՀՄ արտգործնախարար Գրոմիկոն, որին արևմուտքում հայտնի էր որպես «չծիծաղացող» մարդ ևս 1965 թվականի մայիսի 17-ին այցելելում է Անկարա: Նրա ղեկավարած վեց հոգանոց պատվիրակության կազմում էին ԽՍՀՄ արտգործնախարարի առաջին տեղակալ Մակաշևը, ԽՍՀՄ արտգործնախարարության մամուլի ծառայության ղեկավար Զամյատինը և ուրիշներ: Այցը տևում է 5 օր և համնկնում է Թուրքիայի արտգործնախարար Հասան Իշիկի ՆԱՏՕ-ի Լոնդոնյան գագաթնաժողովից վերադարձի հետ: Մամուլի ներկայացուցիչներին տված հարցազրույցում Գրոմիկոն մեկ անգամ ևս ընդգծելով Սովետական միության և Թուրքիայի միջև աստիճանաբար հաստատվող բարիդրացիական հարաբերությունները, այնուամենայնիվ նշում էր, որ «հարևան երկու երկիրները, Խորհրդային Միութիւնը եւ Թուրքիա, քննելիք մասնաւոր խնդիրներ ունին»[18]: Գրոմիկոյի ելույթի այս հատվածը տեղ է գտել նաև թուրքական «Ջումհուրիեթ» թերթի 1965 թվականի մայիսի 18-ի համարում լույս տեսած «Gromiko Ankara'da» վերտառությամբ խմբագրականում[19]:

Անկասկած դժվար է կռահել թե Գրոմիկոն «մասնավոր խնդիրներ» ասելով կոնկրետ ինչ նկատի ուներ, սակայն ակնհայտ է այն հանգամանքը, որ որքան էլ ԽՍՀՄ-ը և Թուրքիան իրենց պաշտոնական հայտարարություններում անընդհատ շեշտում էին երկու երկրների միջև

[17] Քիպարեան Ա., Թուրքիա և մեր դատը, Աշխարհ, Փարիզ, 1965, թ. 237, 3 ապրիլի, էջ 1, թ. 238, 10 ապրիլի, էջ 1:
[18] Ազատ օր, Աթենք, 1965, թ. 6150, 18 մայիսի, էջ 1:
[19] «Cumhuriyet» gazetesi, 1965, 18 mayis.

ընդլայնվող բարեկամության մասին, այնուամենայնիվ, այս երկրների միջև առկա էին որոշակի տարաձայնություններ:

Որպես ասվածի ապացույց ցանկանում ենք բերել այն փաստը, որ Գրոմիկոյին ուղղված պատասխան խոսքում Թուրքիայի արտգործնախարար Հասան Իշիկը, մասնավորապես, նշում է, որ «Հայաստանում իշխող հակաթուրքական միտումները չի կարելի անուշադրության մատնել», որին ի պատասխան Գրոմիկոն հայտարարում է, որ «Նման ակնարկները չեն կարող խանգարել երկու երկրների միջև բարեկամության զարգացմանը»[20]:

Անդրադառնալով հենց ԽՍՀՄ-ի կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին, ցանկանում ենք նշել, որ ԽՍՀՄ կուսակցական ղեկավարությունն իր գոյության ամբողջ ընթացքում ոչ միայն պաշտոնապես չի ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, այլև խորհրդա-թուրքական բարեկամության կարգախոսով, կամա թե ակամա խոչընդոտել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Այս հանգամանքն ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել նրանով, որ, մասնավորապես, 1960-ական թվականների 2-րդ կեսին Սովետական Միությունում մտավախություն կար, թե Թուրքիան կարող է արևմուտքի ձեռքում գործիք հանդիսանալ հակասովետական «խաղերում»: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1965 թվականի նոյեմբերի 15-ին Թուրքիայում ԽՍՀՄ դեսպանն իր ելույթում նշում է, որ ԽՍՀՄ-ը «չէր ցանկանա տեսներ Թուրքիային որպես ԽՍՀՄ-ի դեմ գործիք» [21]:

Կարծում ենք, որ ԽՍՀՄ-ում Թուրքիայի վերաբերյալ եղած մտավախությունների պատասխանը կարելի է գտնել 1966 թվականի հունվարին «Ժենաֆրիկ» պարբերականին տված Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի տված հարցազրույցից վերցված հետևյալ միտքը. «Մենք Սովետական միության հետ վարում ենք բարիդրացիական և տնտեսական սերտ համագործակցության քաղաքականություն և այսուհետ ևս վարելու ենք այդպիսի քաղաքականություն այնքան ժամանակ քանի դեռ այն բխում է Թուրքիայի շահերից»[22]:

Ամփոփելով վերը նշված փաստերը կարող ենք եզրակացնել, որ

---

[20] Տե՛ս Гасымлы М. ДЖ., СССР-Турция: от нормализации отношений до новой холодной войны (1960-1979гг.)./ АНО ИИЦ, Москва, «Инсан», 2008, 576 с.

[21] Նույն տեղում, էջ 173:

[22] Նույն տեղում, էջ 179:

• Հայոց ցեղասպանության 50-ամյակին ՀԽՍՀ-ն դեռևս ինքնիշխան պետություն չէր և բնականաբար չէր կարող միջամտություն ունենալ աշխարհում տեղի ունեցող գործընթացներին:

• Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված չնայած սփյուռքահայության և ՀԿԿ Կենտկոմի առանձին գործիչների գործադրած ջանքերին, այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցում արմատական շրջադարձ այդպես էլ տեղի չի ունենում:

• ԽՍՀՄ կուսակցական ղեկավարությունը ոչ միայն չի ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, այլև առաջնորդվելով խորհրդա-թուրքական բարեկամության կարգախոսով, կամա թե ակամա խոչընդոտել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը:

Մ. Նաջարյան

Հայոց ցեղասպանության 50-ամյակը Խորհրդային Հայաստանում և սփյուռքում

Ամփոփում

1965 թվականը կապված Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ փաստորեն շրջադարձային է դառնում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում: Եթե նախկինում Հայոց ցեղասպանության թեման հասկանալի պատճառներով արգելված էր ինչպես ամբողջ Խորհրդային միությունում, այնպես էլ Հայաստանում, ապա 1965 թվականից սկսած նկատվում է որոշակի դրական տեղաշարժ այս հարցում, որը մեծպես պայմանավորված էր հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բուռն վերելքով: Ի դեպ այս նույն ժամանակաշրջանում սփյուռքահայությունը որպես ցեղասպանությունից հրաշքով փրկվածների սերունդ հերոսական ջանքեր է գործադրում Հայոց ցեղասպանության փաստը աշխարհին հասու դարձնելու և դրա միջազգային ճանաչմանը միտված կոնկրետ քայլեր ձեռնարկելու հարցում: Հանուն արդարության ուզում ենք նշել նաև, որ այս շրջանում ՀԽՍՀ առանձին ղեկավար գործիչներ և, մասնավորապես, Հակոբ Զարոբյանը զգալի ավանդ են ունեցել Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված տարբեր միջոցառումներ կազմակերպելու գործում:

Ներկայացվող հոդվածում կոնկրետ փաստական նյութի հիմնա վրա անդրադարձ ենք կատարել ինչպես բուն Հայաստանում այնպես էլ սփյուռքում Հայոց ցեղասպանության 50-ամյակի հետ կապված իրադարձությունների և ՀԽՍՀ ղեկավարության կողմից ձեռնարկած կոնկրետ քայլերին: Վերջում հենվելով կոնկրետ փաստական նյութի վրա մեր կողմից կատարել ենք համապատասխան եզրակացություններ:

М. Наджарян

50-летие Геноцида Армян в Арм. ССР и диаспоре

Резюме

Всвязи с 50- летием Геноцида армян 1965 год становится переломным в деле его международного признания. Если ранее тема Геноцида армян по понятным причинам была запрещена как во всем СССР так и в Армении, то начиная с 1965 года отметилось определенное продвижение в этом вопросе, которое в большинстве своем было обусловлено бурным под-емом национального самосознания армянского народа. В тоже время диаспора, как поколение чудом спасшихся армян, прилагала героические усилия в деле доведения миру факта Геноцида армян путем международного признания. Воимя справедливости хотим также отметить, что в Арм.ССР отделные партийные руководящие деятели и в частности Акоб (Якоб) Зарубян внес ощутимый вклад в деле организации различиых мероприятий в связи с 50-летием Геноцида армян. В представленной статье на основе конкретных фактитических материалов мы изложили обзор событий в Армении и в диаспоре в связи с 50-летием Геноцида. В конце, опираясь на конкретные фактические материалы, мы сделали соответствующие выводы.

M. Najaryan

The fiftieth aniversary of the Armenian Genocide in Armenia and Diaspora

Summary

Connectioned with the 50th anniversary of the Armenian Genocide, 1965, in fact, becomes a turning point in the international recognition of the Armenian Genocide. If previously for obvious reasons the topic of the Armenian Genocide was banned both in the entire Soviet Union and in Armenia, there has been some positive shift in this issue since 1965, which was largely due to the rapid growth of national self-consciousness of the Armenian people. By the way, in the same period, the Armenian Diaspora, as a generation of metrically survived people from genocide, is making heroic efforts to make the fact of the Armenian Genocide accessible to the world and is taking concrete steps aimed at its international recognition. For the sake of justice, we would also like to note that in this period, separate leaders of the Armenian SSR, particularly Hakob Zarobyan, have made a significant contribution to the organization of various events related to the 50th anniversary of the Armenian Genocide.

In the presented article, based on the concrete factual material we turn to the events related to the 50th anniversary of the Armenian Genocide and the concrete steps undertaken by the leadership of the Armenian SSR. At the end, we have made relevant conclusions on the concrete factual material.